ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

--- փետրվարի 2021 թվականի № Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի №35Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) իր 2020 թվականի փետրվարի 19-ի №35Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) համաձայնություն է տվել «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) սեփականության իրավունքով պատկանող գույքի՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությունում, այդ թվում՝ որպես «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ» փի-էլ-սի ընկերության ապահովման և պարտքերի հավաքագրման գործակալ, և (կամ) Եվրասիական զարգացման բանկում գրավադրման գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը՝ սահմանելով Գործարքի կնքման վեցամսյա ժամկետ,

բ) Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի №278Ա որոշմամբ, Ընկերության դիմումի հիման վրա, Գործարքի կնքման ժամկետը երկարաձգվել է վեց ամսով,

գ) Ընկերությունը 2021 թվականի հունվարի 20-ի №2/9-004 գրությամբ դիմել է Հանձնաժողով և խնդրել ևս տասներկու ամսով երկարաձգել Գործարքի կնքման ժամկետը: Վերջինս հայտնել է, որ գրավադրման ենթակա գույքի չափագրման աշխատանքների իրականացման ընթացքում ի հայտ են եկել անճշտություններ և անհամապատասխանություններ, որոնց պատճառով ձգձգվում է իրավունքների պետական գրանցման գործընթացը,

դ) Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի համաձայն, կարգին համապատասխան համաձայնություն տալու

դեպքերում Հանձնաժողովի կողմից, որպես կանոն, սահմանվում է գործարքի կնքման վեցամսյա ժամկետ, իսկ Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի №278Ա որոշմամբ Գործարքի կնքման ժամկետն արդեն իսկ երկարաձգվել է վեց ամսով, ուստի Հանձնաժողովն, առկա փաստական հանգամանքների ուսումնասիրության հիման վրա, գտնում է, որ Գործարքի կնքման ժամկետը ենթակա է երկարաձգման վեց ամսով, և

հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 19-ի «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի 90 տոկոսը կազմող բաժնետոմսերի և գույքի գրավադրմանը համաձայնություն տալու մասին» №35Ա որոշման 2-րդ կետում «տասներկու» բառը փոխարինել «տասնութ» բառով,
2. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- փետրվարի 2021թ.